



**Վ Ճ Ի Ռ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝

Նախագահությամբ դատավոր՝ **Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ**

Քարտուղարությամբ՝ **Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ**

Սասնակցությամբ՝

Հայցվոր՝ **Գ. ԳՈՄՅՅԱՆԻ**

Հայցվորների ներկայացուցիչ՝ **Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ**

Պատասխանողի ներկայացուցիչ՝ **Գ.ԲԱՂԴԱՍՍԱՐՅԱՆԻ**

2013թվականի հոկտեմբերի 04-ին, Գյումրիում, դռնբաց դատական նիստում, քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի **Գեորգի Արշակի Գոմցյանի /հասցե՝ ք. Գյումրի Անի թաղ. 15 փող., 7 շենք, բն. 1, անձնագիր՝ ԱՅ0450473, տրված 14.12.1998թ. 016-ի կողմից/, Սվետլանա Արշակի Գոմցյանի / հասցե՝ Անի թաղ., 15 փող.,7 շենք, բն. 1, անձնագիր՝ ԱՆ0271061, տրված 22.11.2012թ. 016-ի կողմից/ ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի /հասցե՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, ՀՎՀՀ05511159, ՊԳՎՀ002079/, ՀՀ Շիրակի մարզպետարանի /հասցե՝ Գ.Նժդեհի 16/ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին:**

Հայցվորներ՝ Գեորգի Արշակի Գոմցյանը և Սվետլանա Արշակի Գոմցյանը /ներկայացուցիչ՝ Աշոտ Հովսեփյան/ դիմել են դատարան ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի, երկրորդ պատասխանող՝ Շիրակի մարզպետարանի բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին:

Սակայն մինչ դատաքննությունը գործի քննության նախապատրաստական փուլում հայցվոր կողմը դատարանին ուղղված դիմումով հրաժարվել է հայցից և խնդրել է քաղաքացիական գործի վարույթը կարճել:

Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը պետք է կարճել հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետի՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե՝ հայցվորը հրաժարվել է հայցից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածի 1-ի կետի՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է վճիռ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետով, 110, 130-132, 140 հոդվածներով, դատարանը.

**Վ Ճ Ո Ւ Ե Ց**

Քաղաքացիական գործն ըստ հայցի **Գեորգի Արշակի Գոմցյանի, Սվետլանա Արշակի Գոմցյանի /ներկայացուցիչ՝ Աշոտ Հովսեփյան/ ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի և երկրորդ պատասխանող՝ Շիրակի մարզպետարանի բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասին, կարճել հայցվոր կողմի հայցից հրաժարվելու հիմքով:**

Պետական տուրքի հարցը համարել լուծված:



ԴՐՈՎԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՒԹՅԱՆ  
Մտնց թիվ 8222-13  
04. 10. 13

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան  
հրապարակման պահից մեկ ամսյա ժամկետում

ԴԱՏԱՎՈՐ՝

Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ

ԴԱՏԱՎՈՐ՝

Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

